

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2010թ. դեկտեմբերի 15-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաշվետվությունը 2009/2010 ուստարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

/Չեկ. Մ.Ա.Գրիգորյան/

Դեկան Մ.Ա.Գրիգորյանի զեկուցումը կցվում է:

Ելույթ ունեցան – I . Վ.Ռ.Բոյնագրյան - Առաջարկեց՝

- 1. դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել բավարար,
- 2. դասախոսությունները հաջող կազմակերպելու համար ցանկալի է ֆակուլտետում ավելացնել լսարանային ֆոնդը,
- 3. ավելացնել ամբիոնների կողմից կատարվող գիտական աշխատանքների քանակը, որը հնարավորություն կտա այդ աշխատանքների հիման վրա ներկայացնել արդիական ավարտական հաշվետվություններ և մագիստրոսական թեզեր:

II . Մ.Մ.Թորոսյան - Առաջարկեց՝

- 1. դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել բավարար.
- 2. ցանկալի է հեռակա ուսուցման ուսանողների համար նույնպես կազմակերպել ուսումնական պրակտիկա, որը հնարավորություն կտա բարձրացնել ուսումնական պրոցեսի մակարդակը:

III. Վ.Վ.Վարդանյան - Առաջարկեց՝

- 1. դեկանի աշխատանքը գնահատել բավարար.
- 2. բուֆետի տարածքում կազմակերպել հերթապահություն՝ ընդգրկելով ամբիոնների աշխատակիցներին:

- IV. Ռ.Ս.Մինասյան - Առաջարկեց երկրաֆիզիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների համար Հանքավանում դասախոսների ղեկավարությամբ կազմակերպել ուսումնա-արտադրական պրակտիկա, որը կբարձրացնի կարդացվող երկրաֆիզիկական առարկաների մակարդակը.

Ելույթ ունեցավ ԵՊՀ ռեկտոր պրն. Ա.Հ.Սիմոնյանը՝ մանրամասն կանգ առնելով ֆակուլտետի աշխատակիցների կողմից բարձրացված հարցերի վրա, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը դասելով համալսարանի լավագույն ֆակուլտետների շարքում՝ աշխատանքային կարգապահության, ուսման առաջադիմության և կոլեկտիվում համերաշխ մթնոլորտի առկայության տեսանկյունից: Դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը ռեկտորը գնահատեց բավարար:

ՈՐՈՇՎԵՅ - Դեկան Մ.Ա.Գրիգորյանի 2009/2010 ուստարում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Վերջում ելույթ ունեցավ դեկան Մ.Ա.Գրիգորյանը՝ շնորհակալություն հայտնելով ԵՊՀ ռեկտոր պրն. Ա.Հ.Սիմոնյանին ֆակուլտետի կողմից բարձրացված հարցերին մեծ ուշադրություն դարձնելու և տարբեր ամբիոններում ժամանակակից սարքերի ձեռք բերման աջակցության համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ.Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ԶԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ս.ՍԱՐԳՍՅԱՆ